ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ՍՅՈՒՆԻՑ ՓԱՌԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեշրջանը 5 Ֆր. կամ 2 րբլ. ոս. թղթդրմ.

Յերբիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 9րդ տարեշրջանի (93 օգոստ.—94 ապրիլ) բաժնորդագրին է 20 Ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ Ֆր. հաշուելով և 1894 ապրիլ ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և դրամ պէտք է դրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Թ ՏԱՐԻ ԹԻՒ 7

1893 ՀՈԿՏԵՄԲԵՐ 4

ՍԵՊՏԵՄԲԵՐ 22 (Հ. Տ.)

ՋՈՐԵԳԵՒԱԹԻ

Կը հրատարակուի Ե. եւ Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն դրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեհ. Հայրիկեան ի Ռուսիա.—Վեհ. Հայրիկեան.— Յատուկ լուրեր Վաճեան.—Լուրեր Պարսկահայքէն. — Հանգանակութիւն Ս. Մխիթարեան վարժարանին համար.—Նուիրատուութիւն.—Մեծ. Տիար Յ. Ալիքեանեան.— Ամերիկայի Հայերի Հոգեւոր Հովուութիւնը.—Գեր. Րուսմուզեանի մահը.—Հայեր ի Թիւրքիա.—Վիեննայի տօները Վեհ. կարողիկոսի ճանապարհորդութեան առթով.—«Արարս».— Յանուցումներ։

ՎԵՀ. ՀԱՅՐԻԿՆ Ի ՌՈՒՍԻԱ

(Շար. 6րդ թուէն եւ վերջ)

Թիֆլիզ, 7/19 սեպտ. 93

Սեպտեմբեր 3/15ին, կէսօրէն առաջ վանքի գաւիթը լի էր ժողովրդի խուռն բազմութեամբ. Նախապէս յայտարարուած էր որ Նորին Վեհափառութիւնը այդ օր ժամը 1ին պաշտօնական այցելութիւն պիտի առնէր երկրիս կառավարչապետ Շերեմետեւին։ Նշանակուած ժամին Նորին Վեհափառութիւնն վեհարանէն բազմեց կառքը. կառքի յետեւէն գնում էր կառավարչապետի թիկնապահ հեծելախմբի մի մասը. իսկ նրանցից յետոյ կառքով գնում էին Արիստակէս և Սարգիս Սրբազանները, Խորէն Ծ. Վ. Յակոբեանէ, Սահակ Ծ. Վ. Այվազեան, Անանիա վարդապետ և մօտ 10 քահանաներ։ 5 րոպէից յետոյ կառքն արդէն կանգ առաւ պալատի առաջ. երկու սեռից եւս բազմութիւնն այստեղ ուելի շատ էր խռնուած։ Պր. կառավարչապետի կարգադրութեամբ Վեհափառին ընդունող կառավարութեան ներկայացուցիչ գեներալ Ամբարտանովը, իսկ սանդուխների գլխին դիմաւորեց Պր. կառավարչապետը իւր չքախմբով։ Նա համբուրեց Ն. Վեհափառութեան աջը և մի քանի խօսքով շնորհաւորելով Նրա գալուստը՝ հրաւիրեց դահլիճը։ Այստեղ հաւաքուած էին բազմաթիւ զինուորական բարձրաստիճան պաշտօնեաները, քաղաքագլուխը բոլոր հայ իրաւասունների հետ միասին, մօտաւոր ներկայացուցիչները նոյն։ Բոլոր հանդիսականները խոնարհութեամբ ողջունեցին Ն. Վեհափառութեան։ Առաջին անգամ կարդացուում է Վեհափառի հաստատութեան բարձրագոյն հրովարտակն և ապա միւս երկու հրովարտակները որոնք վերաբերում էին Ալեքսանդր Նեւսկու Լաւրին, Ս. Սերգեայ Վանքին և Ս. Նինոյ։ Հրովարտակները կարդացուելուց յետոյ Վեհափառը դուրս եկաւ այս տեղից. դուրսը սպասող խուռն բազմութիւնը ուրախութեամբ և կեցցեներով ընդունեց Նրան։

Վեհափառը պալատում իւր յաղթանդամ և հսկայ մարմնով, արծուի հայեացքով մի խօսքով իւր անղուգական վեհութեամբ բոլորին էլ միանգամայն հիացրել էր, թողնելով շատ պատկառելի տպաւորութիւն։

Մի ժամից յետոյ Պր. կառավարչապետը փոխադարձաբար այցելեց Վեհափառին։

Երեկոյեան վանքի գաւիթը շքեղ կերպով լուսաւորուած էր, իսկ բազմութիւնն անթիւ ու անհամար էր։

Հետեւեալ օրը, առաւօտեան Վեհափառին ներկայացան Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսները, որոնց ապատուելու լուրը վաղուց արդէն տարածուել էր տեղս և որոնք վերադարձան նախընթաց օրը երեկոյեան գբնացքով։

Այդ նոյն օրը Վեհափառն այցելեց կառավարչապետի օգնական Կոմս Տատիշչեվին և Թիֆլիզի Նահանգապետին, որոնք փոխադարձաբար անմիջապէս այցելեցին Ն. Վեհափառութեանը։

Հետեւեալ օրը, կիրակի, վանքի գաւիթը ծփում էր ժողովրդի անհամար բազմութեամբ. Հայրիկը Վեհափառի պատուհանից դառնալով դէպի ժողովուրդը օրհնութեան մի քանի քաղցր խօսքեր ուղղեց Նրանց և «Պահպանիչ» մ'ըսելով խորհուրդ տուեց գրուել։ Այդ օրը Վեհափառը բարեհաճել էր դարձեալ ճաշ տալ. հրաւիրուած էին մօտ 80 հոգի. դումայի անդամներ, զանազան ընկերութեանց ներկայացուցիչներ, Թիֆլիզի բոլոր խմբագիրներն մի մի աշխատակիցներով հանդերձ և Թիֆլիզի ազնուականների պարագլուխ Մազալովը, որ ճաշից առաջ ներկայացել էր Վեհափառին՝ մի քանի այլ ազնուականների հետ միասին։

Այդ երեկոյ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց այցելել Իշխան Բէհբութեանցին (ց. Պօլոց յայտնի Տատեաններէն փեսան. Վիեննայի դեսպան Նարիման խան նոյնպէս նրանց փեսան է) և 2 ժամ մնալ այնտեղ։

Հետեւեալ օրը այցելեց Ներսիսեան, Ջուղայեան և Գայիսեան ուսումնարաններն ու մի քանի եկեղեցիներ (ի միջի այլոց կուսանոցը). բոլոր ուսումնարաններում եւս Ն. Վեհափառութեան հանդիսաւոր կերպով դիմաւորել էին Հոգեւորականները, ուսուցչական խումբը և աշակերտներն ու աշակերտուհիները։

Այդ օրը Ն. Վեհափառութիւնը բարեհաճեց Խորէն Վ. Յակոբեանին իւր կողմից այցելութեան ուղարկել Թիֆլիզի բանտը և բանտարկեալների օգտին 200 րուբլի նուիրել։

Մինչեւ այդ օրը (սեպտեմբեր 6) դեռ տատանուում էին, մեկնելու օրը չէին որոշել. այդ երեկոյ հաստատապէս իմացանք արդէն, որ Ն. Վեհափառութիւնը վճռել է ճանապարհ ընկնել դէպի Էջմիածին սեպտ. 7/19ին առաւօտեան 8 ժամին։

Այս լուրը թէպէտեւ ժողովրդից շատ քչերը միայն իմացել էին, այնուամենայնիւ առաւօտեան շատ շուտ վանքի գաւիթը կրկին լցուեց խուռն բազմութեամբ. տխրութեան թախիծը պատել էր ամենքին, որովհետեւ գիտէին որ մի քանի րոպէից յետոյ պիտի զրկուեն իրենց մեծ և պաշտելի հիւրից։

Ժամը 7ին Վեհափառը բարեհաճեց օրհնել վանքի գաւթի պարսպից ներսը գտնուող մի քանի գերեզմաններ. իսկ մի ժամից յետոյ ժողովրդի բազմութեան և ամբողջ հոգեւորականութեան ուղեկցութեամբ Ն. Վեհափառութիւնը քառաձի կառքով ուղեւորուեց դէպի կայարանը։

20 րոպէի չափ հանգստացաւ կայսերական սենեակներում, ուր եկել էին բազմաթիւ մարդիկ վերջին անգամ ընդունելու Նորին Վեհափառութեան։

Վ. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ (1)

ՀՈԳԻ

Ամեն ինչ ծանոթ է ինձ, ամեն ինչ հին է ինձ համար, ամեն ինչ ինձ ծանր է դարձրել, ամեն ինչ ինձ ստիպում է ապրել, ինչպես ապրում են ուրիշները, ինչպես ապրում են բոլորը, ինչպես ապրում են բոլոր ժամանակներում, ինչպես ապրում են բոլոր տեղերում, ինչպես ապրում են բոլոր մարդիկ, ինչպես ապրում են բոլոր կենդանիները, ինչպես ապրում են բոլոր թռչունները, ինչպես ապրում են բոլոր ձկները, ինչպես ապրում են բոլոր միջատները, ինչպես ապրում են բոլոր սողունները, ինչպես ապրում են բոլոր կաթնասունները, ինչպես ապրում են բոլոր ծովային կենդանիները, ինչպես ապրում են բոլոր անտառային կենդանիները, ինչպես ապրում են բոլոր դաշտային կենդանիները, ինչպես ապրում են բոլոր լեռնային կենդանիները, ինչպես ապրում են բոլոր անապատային կենդանիները, ինչպես ապրում են բոլոր սառցային կենդանիները, ինչպես ապրում են բոլոր արևադարձային կենդանիները, ինչպես ապրում են բոլոր բևեռային կենդանիները, ինչպես ապրում են բոլոր գիշատիչ կենդանիները, ինչպես ապրում են բոլոր խոտակեր կենդանիները, ինչպես ապրում են բոլոր միատեսակ կենդանիները, ինչպես ապրում են բոլոր տարբեր կենդանիները, ինչպես ապրում են բոլոր նման կենդանիները, ինչպես ապրում են բոլոր անհավասար կենդանիները, ինչպես ապրում են բոլոր զույգ կենդանիները, ինչպես ապրում են բոլոր կենտ կենդանիները, ինչպես ապրում են բոլոր ամբողջական կենդանիները, ինչպես ապրում են բոլոր կիսատ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի Ղալաատար գիւղի քնակիչներէն Տիար Արզուման Արզումանեանց Նուիրեց 9րդ տարեշրջանի 1 օրինակ Արմենիա Սարամերիկ գիւղի վարժարանին, Տ. Կարապետ Ս. Աըզումանեանց՝ Սալրա գիւղի վարժարանին, Տ. Նիկոլա Հասրաթեանց՝ Ղալասարի վարժարանին և Տ. Սահակ Շահկալտեանց փայլոկ գիւղի վարժարանին։

Մարսէյլի Հայոց Ընթերցարանի քնկերութիւնը նուիրեց մէկ մէկ օրինակ Արմենիա Թ տարեշրջանէն Ռուսճուգի Մեսրոպեան և Օրիորդական վարժարաններին, Ռոմանի, Ֆօքշանի և Պուքրէշի վարժարաններին. ամբողջը 5 օրինակ։

ՄԵԾ. ՏԻԱՐ Յ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ուրախութեամբ կիմանանք որ Մանչէսթըրի հայ գաղթականութեան ամենէն հին և ամենէն յարգելի անդամներէ մին, Տիար Յ. Անդրէասեան, Մանչէսթըր քաղաքի հաշտարար դատարանի անդամակցութեան պաշտօնին կոչուած է։ Որքան մեզ յայտնի է, այս առաջին անգամն է որ մի հայ կարժանանայ Անգլիոի մէջ դատաստական աթոռին վրայ բազմիլ, Անգլիացիների դատերը վճռելու համար։

Մեծ. Տիար Յ. Անդրէասեան որչափ որ իր ուղղամտութեամբ հանրածանօթ եղած է վաճառականական ասպարիզին մէջ, նոյնչափ և իր մարդասիրական ակնիւ զգացումներով նշանաւոր է Մանչէսթըրի հայ գաղթականութեան մէջ։ Անդրէասեան տունը Մանչէսթըրի մէջ ներկայացուցիչն է նաեւ Կիւմիւշկերտանեան եղբարց անուանի տան։

Մեծ. Տիար Յ. Անդրէասեանի ևզած այդ պատիւ անչուշտ գոհութիւն կը պատճառէ իւր հայ հայրենակիցներուն որոնք ուրախ պիտի լինին տեսնելով թէ անգլիական կառավարութիւնը գիտէ գնահատել Հայերի ունեցած արժանաւորութիւնները։

ԱՄԵՐԻԿԱՒԻ ՀԱՅՑԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՈՒԹԻՒՆԸ

Թիւրքիոի Հայերի կրօնական ժողովը Ամերիկոի Հայերի Հոգեւոր Հովուութեան համար որոշեր է ընտրելի առաջարկել Երէցեան Տ. Գէորգ, Տէրունեան Տ. Մաղաքիա և Շիշէճեան Տ. Իգնատիոս վարդապետները։

ԳԵՐ. ՐՈՒՄՃՈՒԴԼԵԱՆ

Կ. Պոլսի Պատրիարքական նախկին փոխանորդ Գեր. Գէորգ Վ. Րուսճուգլեան որ բաւական ժամանակէ ի վեր գործէ քաշուած կը բնակէր իւր Տննդավայր Ֆիլիպէ քաղաքը, սեպտ. 10/22ին վախճաներ է։ Յուղարկաւորութիւնը կատարուեր է չքեղ կերպով։

ՀՈՒՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Ազգային կեդրոնական վարչութիւնը ընդուներ է վանի Պօղոս եպիսկոպոսին Բաղէշի առաջնորդութենէն տուած հրաժարականը։ Ցայտնի է որ այդ սրբահռչակ եպիսկոպոսը իր ծերութիւն պատճառելով հրաժարեր էր Բաղէշ երթալէ և կը մնար վան։ Ազգային վարչութիւնը որոշեր է գրել իրեն որ երթայ Լիմ ամենասպատի վանքը, հոն իր վանահայրական պաշտօն շարունակելու համար։

—Կեդրոնական վարչութեան քաղաքական ժողովը կրէատէ կղզուն մէջ Հայերի անվնասմ մնացած եկեղեցուն և անոր կալուածներուն ժառանգաւորութեանը համար մի Հոգաբարձութիւն կազմեր է կ. Պոլսի մէջ և որոշեր է նաեւ մի քահանայ ղրկել կրէտէ, այդ կղզու մէջ և անոր մնատակայ-ները գտնուած Հայերի հոգեւոր պետքերն հոգալու համար։

—Սրսանձատեանց կտակի գործադրութեան համար Ազգային վարչութիւնն հաստատուած խնամակալութիւնը սեպտ. 1/13ին գումարուելով, իրեն ատենապետ ընտրեր է կիւմիւշեան Յովհաննէս էֆէնտին և Ատենադպիր Հաղարեան Զգօն էֆէնտին։ Կը տակուած 1000 ոսկին յանձնուեր է Բերթի ազգային կալուածների Հոգաբարձութեան չահագործելու համար։

ՎԻՒՆՆԱՅԻ ՏՕՆԵՐԸ

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌԹՈՎ

Մենք վիւննայ մեկնելէ վերջ որոշած էինք, ինչ ինչ նկատումներով, քօղարկուած թողուլ մի կարգ եղելութիւններ որ կատարուեցան Աւստրիոի ազատ մայրաքաղաքին մէջ. բայց այժմ կրստիպուինք խզել այդ լռութիւն, որովհետեւ մի ոմն Աբեղեան զոր մենք կը տեսնէինք անգադար Պ. Բորովիչի չուրջ իբրեւ հարազատ արբանեակ, խեղաթիւրելով կը պատմէ «Նոր-Դար»ի մէջ մի կարգ անցքեր։

Մենք կը փափագինք հասարակութեան ներկայել հարազատ մի պատմութիւն այդ անցքերի որ ինքն գատէ թէ ո՞վ է մեղաւորը և տեսնէ թէ հայ գաղթականութիւնների պատուիրակներին վրայ ճնշումներ գործադրել ուզուեցաւ նոյն իսկ Վիւննաի ընտանեկան տօներին մէջ։

Վիւննաի կարգադիր մասնաժողովի կողմէն Պ. Բորովիչ ծանուցագիրներ ղրկած էր բոլոր պատգամաւորներին պատուիրելով ի միջի այլոց. «Երբ Նորին Վեհափառութիւն չոգեհառքէն ելնէ, վայելուչ ծաւրութեամբ աճապոյն կընկերակցիք կարգադիր յանձնախմբին յարգական ողջունատուութեան։ Անմիջապէս Նորին Վեհափառութեան ծաղկեփունջ մը կը նուիրուի(1) ևն.։ «Բարձրագոյն կողմանէ եղած բացարձակ որոշման համեմատ(2), ոեւէ ճառախօսութիւն կամ «կեցցէ» գոչել տեղի չպիտի ունենայ։ Այլ որոշեալ բաժակներ վերցնելու ժամանակ, իւրաքանչիւր ոք անձայն մեծարանք պիտի մատուցանէ, գլուխ ծռելով դէպի այն անձն, որուն համար բաժակ կը վերցուի։ Բաժակ պիտի վերցնէ նախ կարգադիր մասնախմբիս տնօրէնը Նորին Վեհափառութեան բարի գալստեան։ Այնուհետեւ Նորին Վեհափառութեան կը մնայ բաժակ վերցնել որուն ինքն համի։ Ուրիշ ոեւէ անձի թոյլ չտրուիր բաժակ վերցնել։»

Պ. Բորովիչի այս գրածները չատ զարմանք պատճառեցին պատգամաւորներուն։ Պարոնին պաշտօնապէս այցելութեան գնալու առթով, մենք փափագեցանք տեղեկանալ սոցա չարժառիթներուն։ Պ. Բորովիչ մեզ պատասխանեց որ բարձրագոյն հրաման ստացած է որ պէտք չէ յուզում առաջ բերել կամ կառավարութիւնների դէմ խօսիլ. հետեւաբար որոշուած է որ Հայրիկի գալու և մեկնելու օրերը, կամ կոչունքի ատեն ևայլն, ամեն մարդ լռութեան ուղեկցի Նորին Վեհափառութեան և բնաւ ճառ եւս չկարդացուի։ Եւ իրրեւ վերջաբան՝ Պ. Բորովիչ յարեց թէ ինքն վճառական է և եթէ մի ոեւէ վտանգաւոր բան կատարուի, այլեւս չը պիտի կարենայ Թիւրքիա մնալ(1)։ Պ. Բորովիչ խուլ մնաց մեր ամեն պատճառաբանութիւններին թէ վիւննա հաւաքուած պատգամաւորներն ոչ մի կառավարութեան դէմ ցոյց անելու նպատակով չեն եկած, այլ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, հայ ազգի սիրելի Հայրիկին բարի ճանապարհ մաղթելու, Եւրոպաբնակ Հայերի խորին յարգանքները Նորին Վեհափառութեան մատուցանելու նպատակով և թէ կեցցէ կանչել կամ ճառ կարդալ մի վտանգ չէ կարող առաջ բերել թէ՛ Պ. Բորովիչին և թէ՛ պատգամաւորներին։

Այս պարոն ի պատասխան այս ամենի, սրտի մաքուռն ճեւացուց և մենք այցելու պատգամաւորներս հրաւիրուեցանք դուրս ելնել իր գրասենեակէն։ Պարոնի այդ տարօրինակ վարմունքէն յետոյ, ներկայ պատգամաւորներն որոշեցին (2) գործել զիրենք ղրկող գաղթականութիւնների ցանկութեան համեմատ և առ ոչինչ գրել Պ. Բորովիչի արտառոց պատուէրները։ Այսպէս Մարսէյլի պատգամաւորին յանձնուեցաւ վեհափառին արտայայտել Եւրոպաբնակ Հայերի որդիական սէրը և խորին յարգանքները մի կարճ ճառով։

Ամերիկոի ընթերցողներին արդէն յայտնի է որ պատգամաւորների այս որոշումը արդէն գործադրուեցաւ։ Բայց կերեւի թէ Պ. Բորովիչ դիւրաւ չկրցաւ մարսել այդ և իր արբանեակ Աբեղեանի գրչով կը ճգնի խեղաթիւրել ամեն ինչ և յարձակիլ պատգամաւորներին վրայ։ Այսպէս «Նոր-Դար»ի կոպիտ թղթակիցը խնկարկելով Պ. Բորովիչին, կը հայհոյէ անաստուած պատգամաւորներին և կը քննադատէ նոցա ընթացքը։ Սորա փորացաւներէն գլխաւորն այն է որ ինքն Պ. Աբեղեան ալ, չգիտենք ինչ տիտղոսով, մի ճառ գրած է եղեր, չատ անյարմար ոճով գրուած մի բան, և որովհետեւ անկարող էր կարդալ, կը փափագի եղեր որ Այվազեան Սահակ վարդապետ կարդայ զայն։ Կերեւի թէ պարոնը կը կարծէր որ պատգամաւորներին մէջ երկու տող բան գրել գիտցող չկայ և Այվազեան Սահակ վարդապետն ալ երկու խօսք ասելու անկարող էր, այնպէս որ «բրդուեղը ծամած նորա բերան դնելու» հարկ կար։ Պարոնի համեստութիւնն ամեն գովեստի արժանի է (!!)... այնպէս չէ՞, ընթերցո՛ղ։

(1) *Ինչ որ չկատարուեցաւ։*

(2) *Ոեւէ բարձրագոյն հրամանի գոյութիւնը բոլորովին սուտ է։ Մենք առաջ կը բերենք այստեղ Կարգադիր ծանձնախմբովի ամենագործունեայ անդամներէն յարգելի Պ. Քէրկստէճեանի վկայութիւնը որ մեզ յայտարարել բարեհաճեցաւ թէ ինքն, յանձնաժողովի անդամ նոյն իսկ Պ. Բորովիչէն առաջ, կը հաստատէ թէ ոեւէ բարձրագոյն հրաման եղած չէ Վեհ. Կաթողիկոսի ընդունելութեան նկատմամբ։*

(1) *Պ. Բորովիչ վիեննոյն յայտարարութիւններ արած էր մի քանի օր առաջ Վառնաի պատուիրակ Տէր Մանդակունեան, արգիլելով Վառնաի Հայերի մի ուղերձի ընթերցումը։*

(2) *Ժամանակի չգոյութեան և ամենքի հասկնալը չգիտցուելուն պատճառով կարելի չեղաւ բոլոր պատգամաւորներն ի մի հրաւիրել։*

Պարոն Թղթակիցը մասնաւորապէս կը յարձակի մեր վրայ և կուզէ մեզ ներկայել իբրեւ մի բաղդախնդիր որ ուզած ենք խարել ամեն մարդ, մեզ ուսանողջ ծախելով։ «Նա ուսանող չի կարող լինել, կը գրէ պարոնը. որովհետեւ Մարսէյլում համալսարան չկայ»։ Այս տղորմելի Թղթակցի աչխարհագրական տեղեկութիւնների համեմատ Մարսէյլ մի գիւղաքաղաք պիտի լինի և Մարսէյլում ոչ բժշկական վարժարան (Ecole de pleine exercice de médecine) և ոչգիտութեանց Ֆաքիւլթէ (Faculté des sciences) կայ։ Եթէ իրողութիւնները կը պակսին, սուտեր չհնելու է. այնպէս չէ՞, Պ. Աբեղեան։ Բայց մենք կը ծանուցանենք ձեզ թէ ոչ միայն բժշկութեան ուսանողջ ենք, այլ նաեւ Մարսէյլի հիւանդանոցներին մէջ ներքին-բժիշկ (médecin-interne des hôpitaux; assistant) լինելու պատիւն ալ ունինք. այսինք ձեր մուրէն չազատուելու համար բաւական բարձր դրքի մէջ կը գտնուինք։

(Շարունակելի)

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ

ԱՐԱՔՍ

Պետերբուրգի ԱՐԱՔՍ վեցամեայ հանդիսի ներկայ տարուս Ա. գրքի՝ որ հրատարակուած է արդէն, բովանդակութիւնն է հետեւեալը։

*Մի քանի խօսք. Խմբագրութենէ։ — ՀԱՄԱՐԱԿԱՆ ԽՐՆԴԻՐՆԵՐ. Հայ մամուլի վիճակի առթով, Ս. Գուշակիրեանց։ — ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. Ատրպատականը ներկայումս. Պարսկաստանից և Տաճկաստանից, Ազէքսիա. Սարուշէն գիւղը, Արցախեցի. Հայ թիսլը Հայաստանում, Կոնդցի։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցիչատակաց ծրար մը, Ս. Տէվկանց։ — ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան։ Առհ. Տաճփանոս եպիսկոպոս Մխիթարեան. Ատրպատականի Հայոց ապագան, Երեւանեան. Խորէն արքեպիսկոպոս Նար-Պէյ, ***։ — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. Բեթղէհէմի այրի սուրբ մանկիկը, Ա. Իսահակեան. Ռափայէլ Պատկանեանի յիշատակին, Գ. քահ. Մկրտումեանց. Աղէտը, Յ. Կոստանեանց. Ա. յուզաղ, Յ. Կոստանեանց. Քուռի ափին, Հայ Արմեն։ — ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ. Ֆ. Դօստօեւսկի-Ցիչատակարան մեռեալ տանից (Յաւելուածոյ) չարունակելի։ — ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ. Du Caucase au golfe Persique à travers l'Arménie, le Kurdistan et la Mésopotamie par P. Müller-Simonis, suivie de notices sur la géographie et l'histoire ancienne de l'Arménie et les inscriptions cunéiformes du Bassin de Van par H. Hyvernat. Paris, 1892. (Կովկասից մինչեւ Պարսից ծոցը Հայաստանի, Քրդստանի և Միջագետքի վրայով, Միւլլեր-Սիմոնի հայկն։ — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. Վրաց ժողովրդական երգեր, Հայ Արմեն։—ԱՑԼ ԵԻ ԱՑԼՔ։ — ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ. Գեղաքաւեստը և նրա նշանակութիւնը. Գեղարուեստների մասին, Լ. Մ.։—ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։*

«Արաքս»ի այս գրքի նկարներն են՝ ԲՆԱԳՐՈՒՄ. 1. Գլխանկար. 2. Սարուշէն գիւղի տեսարանը. 3. Սարուշէն գիւղի եկեղեցին. 4. Սարուշէնի գիւ-

«ԱՐՄԷՆԻԱ» Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ

ԳԻՐՔԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՐ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ

1893 Նոյեմբեր 21/3 Դեկտեմբերի կիրակի օրը

ԳԻՆ ՏՈՄՍԱԿԻՆ 1 ՖՐԱՆԳ

Տոմսակները Արմէնիա լրագրի կնքովը կնքուած և խմբագիր-տնօրէնէն ստորագրուած են։

☞ Այս վիճակահանութեան ամէն թիւերն ալ կը շահին որովհետեւ 2000 տոմսակ է և 2000 օրինակ բնաիր գիրքեր, տետրակներ, պատկերներ, աշխարհացոյց քարտէզներ (100 ֆրանգնոցէն մինչեւ 15 սանթիմնոց) վիճակահանութեան դրուած են որ պիտի կատարուի 1893 Նոյեմբեր 21/3 դեկտեմբերի կիրակի օրը, Մարսէյլ, Արմէնիա լրագրի խմբագրատանը մէջ։ Իւրաքանչիւր թուի շահածը կը հրատարակուի նոյն չաբաթի մէջ Արմէնիայի միջոցով։ Վիճակահանութեան կատարուելէն յետոյ՝ ամէնէն ուշը ՄԻՆՉԵՒ ԵՐԵՔ ԱՄԻՍ, այսինքն մինչեւ 1894 փետրվար 21/5 մարտ, ով որ իւր տոմսակ ներկայացուցէ կամ ղրկէ Արմէնիայի խմբագիր-տնօրէնին, կստանայ ինչ որ վիճակուած է անոր. կարող է նաեւ խմբագրատան Գրացուցակի գնովը իրեւ դրամ հաշուել ինչ որ ելած է իւր տոմսակի կամ տոմսակներուն և նոյն արժէքի համեմատութեամբ ուրիշ գիրք կամ պատկեր առնել Արմէնիայի խմբագրատան մէջ ծախու գտնուածներէն։

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց աւարտելոց (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաչունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆՉԻ ՕՐԷՆԴԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՒ ՀԱՅԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւնները կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բաղդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմէնիայի Ա. տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն դէթ 30ի չափ ամփոփուած են ցուշարարի մէջ որ ուրիշ գիրք կամ դիմաց 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՍ (Ծուներատանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ծոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւնները տակի տակ իրերեցին գրած ոտանաւորներուն որոնք ժամանակին հրատարակուած չի լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրրև նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած աղգային երգարաններուն մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմէնիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

Ասոնցմէ զատ, Արմէնիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Գարեգին Զարբհանէլեանի, Րաֆֆիի, Շէրենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ Հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիներով ևլն. ևլն.։

Գրավաճառանոցի մանրամաս ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներուն կը ղրկուի ձրիապես։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի

Marseille. — Imprimerie du Midi, et Papeterie Allées de Meilhan, 44.

զականք և «Ալվաղեան» դպրց. սաներ. 5. Վանի միջնաբերդը Ակդեստանից։ 6. Վարագայ վանքի տաճարը. 7. Վարագայ վանքի Միաբանութիւնը և Սենեքերիմ Թագաւորի դահը. 8. Մատթէոս Եպ. Իզմիրլեան. 9. Ստեփաննոս Եպ. Մխիթարեան. 10. Խորէն արքեպ. Նար-Պէյ։ —ԲՐ. ՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. 11. Վանայ ծովը և Սիփանայ սարը. 12. Վարագայ լեռը. 13. Բիթլիս. 14. Բաշգալէ. 15. Հայ կանայք հաց թըխելիս. 16. Զանգուի (Հրազդան) կամուրջը երեւանում։—ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ. 17. Ս. Գեղարդի ժամատան արեւմտեան դուռը. 18. Ս. Պօղոս Պետրոսի մատուռը Ելիզայում. 19. Գօշ Մխիթարի հրաշակերտ խաչքարը. 20. Մի նոյնպիսի ուրիշ խաչքար։ — ԳՆԳԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ. 21. Տիրամայր, Ոսկեբաղէ Սանցիոյի (փոքրագիր և մեծագիրը). 22. Նիագարի Ջրվէժը, Ց. Այվազովսկու. 23. Ցիսուս և Սամարացի կինը, Հ. Սեմիրադսկու. 24. Յաւերժահարս, Պ. Թուռվանի. 25. Ֆէլլահ կինը իւր մանկան հետ, Ն. Զիխովի. 26. Հէքիաթ, Կ. Բօդենհաուզենի. 27. Փոթորկից առաջ, Լ. Մահոտեսեանցի. 28. Տաճկահայ բանուորը, Էսիւդ Գր. Գաբրիէլեանցի. 29. Տաճկահայ բանուորը, Էսիւդ Գր. Գաբրիէլեանցի. 30. Աբշալոյս, Նկար Հասմոռի։ 31. Վանդակի փայտի վերայ, Նկար Ջիակոմելլու։

«Արաքս» գրական և գեղարուեստական վեցամսեայ պատկերազարդ հանդիսի բաժնորդագինն է 3 ռուբլի։ Իւրաքանչիւր գիրքը առանձին արժէ 2 ռ. 50 կ.։ Ամէն մի գիրքը բաղկանալու է 12 թերթից ոչ պակաս գիրքով և 24 նկարից։

«Արաքս»ի 1892 թ. բաժանորդագրութիւնը փակուած է։ Շարունակուում է 1893 թ. բաժանորդագրութիւնը։ Ապառիկ և վերադիր վճարով բաժանորդագրութիւն ամենեւին չէ ընդունվում։

Երկրորդ գիրքը լոյս կը տեսնի դեկտեմբերին։

«Արաքս»ի խմբագրութեան հետ գործ ունեցողները և բաժանորդ գըրուողները դիմելու են Սիմէոն Գուլամիրեանցին ընդ միշտ այս պարզ և միանգամայն ապահով հասցեով.

Siméon Goulamiriantz
(Russie) St·PÉTERSBOURG

Արտասահմանի համար բաժանորդագինն է 4 աւստրիական գուլդէն կամ 8 ֆրանգ։

ԳՐԱՇԱՐԱԿԱՆ ԱԶԴ

Արմէնիայի համար մի գրաշար պէտք է որ կարող լինի Արմէնիան իր այժմեան դիրքով (2 սիւնակի չափ 10 կէտ տառերով և 9 սիւնակի չափ 12 կէտ տառերով չարելիք և չորս սիւնակ ծանուցումներ) չաբաթն երկու անգամ լինք մինակ չարել և սրբագրուած փորձերն ուղղելէ յետոյ տեղաւորել զանոնք երկաթէ շրջանակներին (châssis) մէջ տպագրելին յանձնելու համար. տպագրուելէն յետոյ ցրուել չարածները։ Այդ աշխատութեան փոխարէն կը վճարուի իրեն ամսական 140 ֆրանգ։ Եթէ լրագրէն դուրս մի բան չարել տրուի իրեն, առանձին վճարք կը լինի անոր համար։

Մանրամասնօրէն բանակցութեան համար պէտք է դիմել ուղղակի Արմէնիայի խմբագիր-տնօրէնին որին պէտք է գրէ յանձնառու եղողը, իր կարողութեան մասին ապահովիչ տեղեկութիւններ տալով։

ԳԻՐՔԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԱԿՆԵՐԸ

Արմէնիայի խմբագրատան գիրքերի վիճակահանութեան տոմսակներէն ունենալ ուզողները նիւ Եորքի և շըրջակայքների մէջ կարող են դիմել նաեւ Տիար Կ. Պուզտանեանին որ յանձնառու եղած է այդ դիւրութիւն տալ իրենց, խմբագրութեանս ձեռնարկներին օգնելու նպատակով։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

ՀՐ ԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած),
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՄՐԱՑԵԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայասատանցիների պանդխտութեան տխուր հետեւանքներէ մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.